ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վեդի ***13 ապրիլի 2022թ***

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՀՐԱՎԻՐՎՈՂ ՆԻՍՏԻ

2022 թվականի ապրիլի 13-ին, ժամը 11:00-ին Վեդի համայնքի ավագանու նստավայրում՝ Վեդու համայնքապետարանի շենքում (ք. Վեդի, Թումանյան 4), տեղի ունեցավ Վեդու նորընտիր ավագանու առաջին նիստը, որին մասնակցում էր Վեդի համայնքի ավագանու **16** անդամ, համաձայն գրանցման արդյունքների այդ մասին հայտարարեց Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Ստեփանյանը:

Ավագանու նիստից բացակայում էին՝ *Սպարտակ Թարթիկյանը, Լաերտ Մանուկյանը, Համլիկ Գևորգյանը, Ռաֆիկ Անդրեասյանը, Դանիել Հակոբյանը, Քնարիկ Ամիրյանը, Գերասիմ Սարոյանը, Սարգիս Ղազարյանը, Տաթևիկ Հարությունյանը, Գարիկ Հովհաննիսյանը և Հռիփսիմե Արշակյանը*

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ *ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացուցիչներ, Անդրանիկ Ավետիսյանը, Ռաֆիկ Հարությունյանը, Տիգրան Վարդանյանը*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում էր նիստին ներկա տարիքով ավագ անդամ Զեմֆիրա Հովհաննիսյանը, որը հայտարարեց նիստը բացված:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը

1.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ */Զեկ.Հ.Ստեփանյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հիմք ընդունելով թիվ 13 տարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 3-ի «Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 27-ի ընտրությունների արդյունքներով Վեդի համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 17-Ա որոշումը և 2022 թվականի ապրիլի 7-ի «Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N 14 արձանագրությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 13-ի՝ համամասնական ընտրակարգով ընտրված նորընտիր ավագանու առաջին նիստի օրակարգը՝

1.1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի մասին
1.2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը հաստատելու մասին
1.3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպելու մասին
1.4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին
1.5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և վարչական ղեկավարների նստավայրերը սահմանելու մասին:

Կողմ -16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 1-Ա/

2.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ
/Զեկ.Հ.Ստեփանյան/

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 13 տարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 3-ի թիվ 17-Ա որոշումը և 2022 թվականի ապրիլի 7-ի թիվ 14 արձանագրությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Գարիկ Մնացականի Սարգսյանին օրենքի ուժով համարել Վեդի համայնքի ընտրված ղեկավար՝ 2022 թվականի ապրիլի 13-ից:

Կողմ -16 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 2-Ա/

3.Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ */Զեկ.Հ.Ստեփանյան/*

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 13 տարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 3-ի թիվ 17-Ա որոշումը և 2022 թվականի ապրիլի 7-ի թիվ 14 արձանագրությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը՝ մինչև Վեդի համայնքի ավագանու կանոնակարգի հաստատումը՝ հետևյալ կարգով.

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված հետևյալ երդմամբ.

«Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի պաշտոնը՝ **երդվում եմ.**

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և

բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

2. Բնակիչներին տված երդմամբ Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանը համարվում է լիազորությունները ստանձնած:

Կողմ -16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 3-Ա/

4.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ */Հեկ.Հ.Ստեփանյան/*

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 13 տարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 3-ի թիվ 17-Ա որոշումը և 2022 թվականի ապրիլի 7-ի թիվ 14 արձանագրությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի երդման արարողությունն անցկացնել 2022 թվականի ապրիլի 16-ին, ժամը 11:00-ին:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպել ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի դահլիճում (հասցե՝ ք. Վեդի, Թումանյան փողոց 6 շենք):

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի երդման արարողությանը հրավիրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արարատի մարզպետարանի, Հայ Առաքելական եկեղեցու, համայնքի ազգաբնակչության ներկայացուցիչների, մշակութային, հասարակական գործիչների, պատվավոր քաղաքացիների և այլն:

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպման պատասխանատվությունը դնել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի վրա:

Կողմ -16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 4-Ա/

5. Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ.Հ.Ստեփանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը և ժամը սահմանել 2022 թվականի ապրիլի 28-ին, ժամը 11:00-ին:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդու

համայնքապետարանի նիստերի դահլիճում (հասցե՝ ք. Վեդի, Թումանյան փողոց 6 շենք):

Կողմ -16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 5-Ա/

6. Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ */Զեկ.Հ.Ստեփանյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.4)-րդ կետի պահանջով,համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և Վեդի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը, համաձայն աղյուսակի՝

Վեդի համայնքի ավագանի-քաղաք Վեդի, Թումանյան փողոց 6
Վեդի համայնքի ղեկավար-քաղաք Վեդի, Թումանյան փողոց 6
Այգավան բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Այգավան,Շառլ Ազնավուրի 7
Արալեզ բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Արալեզ,Չարենցի 12
Գինևետ բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Գինևետ,Գործարանային 5
Գոռավան բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Գոռավան,Գևորգ Մարզպետունի 12
Դաշտաքաի բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Դաշտաքար,Կենտրոնական 22
Եղեգնավան բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Եղեգնավան,Խանջյան 20
Լանջանիստ բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Լանջանիստ,Վերադարձի 12
Լուսառատ բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Լուսառատ,Գևորգ Չաուշի 43
Լուսաշող բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Լուսաշող,Կենտրոնականի 66
Նոր Ուղի բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Նոր Ուղի,Գարեգին Նժդեհ 30/1
Նոր Կյանք բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Նոր Կյանք,Վ.Մամիկոնյան 17
Շաղափ բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Շաղափ,Արարատյան 17
Ոսկետափ բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Ոսկետափ,Հակոբ Աբելյան 1
Սիսավան բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Սիսավան,Այգեստան 1
Վանաշեն բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Վանաշեն,Ազատության 13
Տափերական բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Տափերական,Շահումյան 5
Ուրցաձոր բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Ուրցաձոր,Տիգրան Մեծի 28
Փոքր Վեդի բնակավայրի վարչական ղեկավար-գյուղ Փոքր Վեդի,Վ.Սարգսյան 1 նրբանցք 2

Կողմ -16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 6-Ա/

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆՇԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԶԻԶ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ԹՈՒՆՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԵՐՈԲ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՀՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Նիստը վարեց՝

ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ_____

Նիստն արձանագրեց՝

Հրաչյա Ստեփանյանը _____